ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com
http://www.idcarmenia.am

Հոկտեմբերի 30, 2020թ.

ՀՀ ԱԺ պատգամավոր Գևորգ Գորգիսյանն ընդդեմ «Չորրորդ իշխանություն» թերթի

Կարծիք

Գործի հանգամանքները

2020թ. փետրվարի 29-ին https://4rd.am/ լրատվական կայքը հրապարակել է հետևյալ հոդվածը ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Գևորգ Գորգիսյանի մասին.

Գորգիսյանը կլիներ ջերկիր

Պաշտոնապես հայտարարում եմ՝ ովքեր մտահոգ են, որ ՈՉ-ի ճամբարում մեր լիցենզիայով հանձնաժողովի անդամ է լինելու՝ պատրաստվում էին լցոնումներ իրականացնել ընտրական տեղամասերում»,- ասել է ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցության քարտուղար Գևորգ Գորգիսյանը:

«ՉԻ». Հետո ասում են՝ Հայաստանում կորոնավիրուս չկա: Մարդը բացահայտ ցույց է տալիս, որ խնդիրներ ունի, բայց քանի որ «ընդդիմադիր» է՝ Թորոսյանը չի ցանկանում նրան հոսպիտալացնել: Գորգիսյանի դեպքում կարելի է նաև պնդել, որ դիմակները չեն օգնում վիրուսից պաշտպանվել. չէ՞ որ նա առաջին իսկ վտանգի դեպքում մշտապես դիմում է թաշկինակի օգնությանը և փակում քիթն ու բերանը: Գորգիսյանի մոտ կարծես արդեն բարի ավանդույթ է ձևավորվել՝ ցանկացած լուրջ գործընթացի նախաշեմին նա անում է մի գործողություն կամ արտահայտում մի միտք, որը դառնում է այդ գործընթացի անքակտելի մասը: Եվ քանի որ ԼՀԿ-ն հիմա մտել է մարաղ, և մանյովրի դաշտը փոքրացել է, հերոսի ազգանունով պատգամավորը որոշեց սահմանադրական փոփոխությունների գործընթացի մեջ իր անունը մտցնել նման անհեթեթ մտքերով: Պաշտոնապես հայտարարում ենք՝ եթե Միքայել Մինասյանը չստեղծեր «Լուսավոր Հայաստանը» և չլիներ Գևորգի ազգանվան առավելությունը, ապա նա հաստատ կլիներ ջերկիր»»:

Ազգային ժողովի պատգամավոր Գևորգ Գորգիսյանը, ով «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ է, դիմել է դատարան՝ պնդելով, որ լրատվամիջոցը

անվանարկել է իրեն հոդվածի վերջին նախադասությամբ, մասնավորապես՝ իրեն անվանելով «ջեբկիր», որը գրական հայերենով նշանակում է գրպանահատ: Նա նշել է, որ տվյալ արտահայտությունն առարկայազուրկ է ու բովանդակազուրկ, չի փաստարկված որևէ համոզիչ պնդմամբ, քանի որ այդ արտահայտությունն ընդամենը հոդվածի հեղինակի վառ երևակայության արդյունքն է, և/կամ ընդգծված ցինիզմի դրսևորում, որ հոդվածագիրն իրեն մեղադրում է մի արարքի մեջ, որը հանցագործություն է, հետևաբար, հոդվածը գրվել է իրեն վիրավորելու, պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակով:

Ի պատասխան հայցադիմումի, լրատվամիջոցը հանդես է եկել հոդվածով, որում հայտարարել է, որ «ջեբկիր» անվանելով՝ նպատակ է ունեցել «ծաղրել» Ազգային ժողովի պատգամավորին ավելի վաղ կատարած հրապարակային մի հայտարարության համար, ըստ որի՝ նրանք, ովքեր քննադատում էին «Լուսավոր Հայաստանի» պատրաստակամությունը՝ համալրել սահմանադրական հանրաքվեում ՈՉ-ի ճամբարի հանձնաժողովները, «պատրաստվում էին լցոնումներ իրականացնել ընտրական տեղամասերում»: Լրատվամիջոցը հայտարարել է, որ «նման աղավաղված տրամաբանություն կիրառելու դեպքում կարելի է նույն հաջողությամբ «եզրակացնել», որ որոշ պայմանների կատարման դեպքում՝ նա կարող էր դառնալ ջեբկիր»: Դատական քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Վերլուծություն և եզրակացություն

1. Անկասկած է, որ վիճահարույց արտահայտությունը լրատվամիջոցի կողմից օգտագործվել է որպես գնահատական-դատողություն, և ոչ փաստացի հայտարարություն: Հետևաբար, արտահայտության իրավաչափությունը կգնահատվի գնահատող-դատողություն հասկացության ներքո:
2. Գնահատական-դատողությունն ապացուցման ենթակա չէ: Այն իր էությամբ կարծիք է, ենթադրություն՝ որևէ իրի կամ երևույթի վերաբերյալ անձի, տվյալ դեպքում՝ լրագրողի սուբյեկտիվ գնահատականը: ՀՀ Սահմանադրական դատարանը գտնում է, որ գնահատողական դատողությունը փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում արվող հետևություն է, ինչը լրագրողի ոչ միայն իրավունքը, այլև պարտականությունն է:[1]
3. Տվյալ դեպքում լրատվամիջոցը քաղաքական գործչի հրապարակային հայտարարությանը տվել է սուբյեկտիվ գնահատական՝ սուր համեմատության միջոցով: Որպես այդպիսին, դա տեղավորվում է քաղաքական գործիչների քննադատության թույլատրելի շրջանակներում: Այդ առնչությամբ բազմիցս նշվել է, որ քաղաքական գործիչները պետք է զսպվածություն ցուցաբերեն իրենց հասցեին հնչող քննադատության առնչությամբ, նույնիսկ եթե դրանք ցնցող են, անհանգստացնող և անգամ սադրող[2]: Կարևոր հանգամանք է, որ

[1] ՍԴՈ-997, բաժին 7, նախավերջին և վերջին պարբերություններ:
[2] Վճռաբեկ դատարանի թիվ **ԵԿԴ/2293/02/10 գործով** որոշում, 27.04..2012թ., էջ 18: Տե՛ս նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշման 11-րդ բաժնում: ՏՎԽ-ն իր թիվ 40 որոշման մեջ եզրահանգել է, որ թեև լրագրողական ազատությունը ներառում է հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ սուր քննադատական, ցնցող, անհանգստություն պատճառող և նույնիսկ սադրող բնույթի խոսք տարածելու հնարավորություն, նման ազատությունը ազատ խոսքի խախտում չէ, եթե լրագրողը միաժամանակ գործում է բարեխղճորեն և տրամադրում է վստահելի ու ճշգրիտ տեղեկություն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա (*Շաբանովն ու Տրենն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 5433/02, 14/12/2006, ՄԻԵԴ, § 40):

քննադատությունը չպարունակի ատելության խոսք կամ անհարկի, հանիրավի վիրավորանք: Տվյալ դեպքում օգտագործված արտահայտությունը ատելության խոսք չի կարող որակվել:

4. Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք հնչեցված արտահայտությունը վիրավորանք է, Խորհուրդը նկատում է, որ քննադատությունը զուրկ չէ համատեքստից: Վիճահարույց արտահայտությունն օգտագործվել է որոշակի համատեքստում, որի վերաբերյալ լրատվամիջոցը տվել է պարզաբանում իր պատասխան հոդվածում: Մասնավորապես, մինչև հրապարակումը ծավալվել էին իրադարձություններ, որոնք բխել էին քաղաքական գործչի հրապարակային խոսքից և առաջացրել էին դժգոհություն հասարակական որոշակի շրջանակներում: Քննադատական խոսքը հրապարակվել էր տվյալ իրադարձությունների լույսի ներքո՝ դրանց արձագանքելու նպատակով: Այսինքն, կարծիքը չի հնչեցվել առերևույթ կամայականորեն, այլ նպատակ է հետապնդել համարժեք արձագանքել քաղաքական գործչի հրապարակային ելույթին:
5. Նույն համատեքստում ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ գնահատող դատողությունը չի կարող համարվել վիրավորական, եթե հիմնված է որոշակի փաստական հանգամանքների վրա: Սույն մոտեցումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից, ըստ որի՝ գնահատական-դատողությունը որպես արտահայտվելու եղանակ անիրավաչափ չէ, եթե հիմնված է որոշակի փաստական հիմքերի վրա[3]:
6. Այսպիսով, որոշիչ նշանակություն ունի այն հանգամանքը, որ վիճահարույց գնահատական-դատողությունը բխել է կոնկրետ իրավիճակից, փաստակազմից, որն էր՝ քաղաքական գործչի հրապարակային հայտարարությունը, ինչը պարունակել է ծայրահեղ գնահատական քաղաքական կոնկրետ իրադարձությունների վերաբերյալ: Տվյալ դեպքում լրատվամիջոցի քննադատությունն ինքնանպատակ չէր, հետապնդում էր հանրային նպատակ, կոչված էր հանրության ուշադրությունը հրավիրել քաղաքական գործչի հրապարակային խոսքի վրա:
7. Հաշվի առնելով վերը նշվածը, **Խորհուրդ գտնում է, որ տվյալ հանգամանքում լրատվամիջոցը տեղեկություններ ու գաղափարներ տարածելու իր իրավունքն իրացրել է համաչափորեն և իրավաչափորեն:**

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Արա Ղազարյան - «Արևի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն
Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ
Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր
Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Օլգա Սաֆարյան - Փաստաբան
Դավիթ Սանդուխչյան - Փաստաբան

[3] E.S.-ն ընդդեմ Ավստրիայի, թիվ 38450/12, 25/10/2018, 18/03/2019, կետ 48: